# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3304 ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
հեռ. +374 285-42036, 060521818
Էլ.փոստ kapan.syuniq@mta.gov.am, info@kapan.am

3301 г.Капан, А.Манукян 5а
тел. +374-285-42036, 060521818

04 ապրիլի 2019թ. N **Ե-17/1081**

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Պողոսյան

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջի Ձեզ ենք ներկայացնում Կապան համայնքի ավագանու 2019թ. մարտի 29-ի 2-րդ հերթական նիստի թիվ 6-30 որոշումները:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

*Կատ. Քարտուղարության բաժնի պետ՝ Անետա Գաբրիելյան*
*028540852*

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ N 3422
05 04 2019 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 6-Ա**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղական առաջարկությունը նիստի օրակարգը հաստատելու մասին, ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Կապան համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 29-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Կապանի Պլաստշին համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածությանը համաձայնություն տալու մասին
2. ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի մշակույթի կենտրոն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածությանը համաձայնություն տալու մասին
3. ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի կոմունալ ծառայություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածությանը համաձայնություն տալու մասին
4. ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգի համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածությանը համաձայնություն տալու մասին
5. «Կապանի արվեստի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
6. Կապանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու և համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի թիվ 6-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
7. Համայնքի ղեկավարին կից՝ համայնքի բյուջեի և հնգամյա զարգացման ծրագրի կառավարման խորհրդակցական մարմին ստեղծելու և անհատական կազմը հաստատելու մասին
8. Կապան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 117-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
9. Կապան համայքնի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պետական բարեկարգման կարգը սահմանելու և Կապան համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 23-ի թիվ 71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու և Կապան համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 23-ի թիվ 72-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

11. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին

12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի կողմից սոցիալական աջակցության տրամադրման կարգը և չափորոշիչները սահմանելու և Կապան համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 23-ի թիվ 73-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին

14. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու և Կապան քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 131-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

15. Կապան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու և Կապան համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 20-ի թիվ 28-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

16. Տեղական ինքնակառավարմանը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի բնակիչների մասնակցության կարգը հաստատելու և Կապան համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 20-ի թիվ 36-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

17. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը սահմանելու և Կապան քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 74-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

18. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու և Կապան քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 20-ի թիվ 35-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

19. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Կապան քաղաքի Գործարանային փողոցի թիվ 34/5 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից 0,75774 հա հողամասը արտադրական կառուցապատման նպատակով աճուրդով վաճառելու մասին

20. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի թիվ 25բ/11 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0,002 հա հողամասը բնակելի կառուցապատման նպատակով աճուրդով վաճառելու մասին

21. Կապան համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող, Կապան համայնքի Արծվանիկ գյուղի Նոր Ջուր թաղամասի թիվ 5, 6, 7, 8, 9 և 10 հասցեներում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրելու մասին

22. Կապան համայնքի վարչական սահմաններում, Հ. Ավետիսյան փողոցի թիվ 154/1 հասցեում գտնվող, որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն փոխանցված 0,00221 հա հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

23. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Սևաքար գյուղի ներբնակավայրային օբյեկտները վերահասցեավորելու՝ «նրբանցքները» «թաղամասերի» անվանափոխելու մասին

24. Կապան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Շինարարների փողոցի թիվ 8/43 հասցեում գտնվող գրադարանի թիվ 2 սենյակը՝ ընդհանուր 15.1 քառ.մ մակերեսով հասարակական նշանակության ոչ բնակելի տարածքը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԱՅԿԻՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 7-Ա**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆԻ ՊԼԱՍՏՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Նորայր Գրիշայի Հարությունյանին ՀՀ Սյունիքի մարզի Կապանի Պլաստշին համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու մասին:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 8-Ա**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Գևորգ Գագիկի Հարությունյանին ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մշակույթի կենտրոն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու մասին:

**Կողմ( 11 )՝**

| | |
|---|---|
| ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ | ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ |
| ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ | |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 9-Ա**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Արտավազդ Ցուրիկի Կարապետյանին Կապան քաղաքի կոմունալ ծառայություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու մասին:

**Կողմ( 11 )՝**

| | |
|---|---|
| ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ | ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ |
| ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ | |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 10-Ա**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Կառլեն Արմենակի Հայրապետյանին ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգի համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու մասին:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 11-Ա**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**«ԿԱՊԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 28-րդ կետերի, 81-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ստեղծել «ԿԱՊԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել «ԿԱՊԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
3. Հաստատել «ԿԱՊԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն թիվ 2 հավելվածի:
4. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Ռ. Մելիքյան փողոցի 8 հասցեում գտնվող հասարակական նշանակության շենքի առաջին հարկից 611,05 քմ մակերեսով տարածքը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «ԿԱՊԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԱՌԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*

**Հավելված թիվ 1**

**Կապան համայնքի ավագանու**

**2019թ. մարտի 29-ի N 11-Ա որոշման**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզի Կապան
համայնքի ավագանու
29.03.2019թ. թիվ 11-Ա որոշմամբ

Կապանի համայնքապետ՝

_____Գ.Փարսյան

Կազմված է _____ թերթից
Տպագրված է ընդամենը _____ օրինակ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ _____ 2019թ.
գրանցման թիվը_____
վկայական_____

Հարկ վճարողի հաշվառման համարը

Կապանի Տ/Բ պետ

_____

# ԿԱՊԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, Ք. ԿԱՊԱՆ-2019թ.

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի «ԿԱՊԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է:

Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ԿԱՊԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «ԿԱՊԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀՈԱԿ:

Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարը:

Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 29-ի թիվ 11-Ա որոշման հիման վրա:

1.2 Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.3 Կազմակերպության գտվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մելիքյան 8:

1.4 Կազմակերպությունը որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Կազմակերպությունը ունի Հայաստանի Հանրապետության զինաշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմներ, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

1.6 Կազմակերպվությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.7 Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.8 Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.9 Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը մշակութային բնույթի գործունեության իրականացումն է:

2.2 Մշակութային գործունեությունը մշակույթային արժեքների և առարկաների (օբյեկտների) պահպանումը, ստեղծումը, տարածումը, մեկնաբանումը, մշակութային ծառայությունների մատուցումն ու արտադրանքի (ապրանքների) իրացումն է:
2.3 Կազմակերպությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝
ա) արտադպրոցական կրթական ծրագրերի իրականացում
բ) ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների, ներկայացումների և մշակութային այլ միջոցառումների իրականացում
գ) հրատարակչական գործունեության իրականացում,
դ) հուշանվերների արտադրություն և իրացում:
Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:
2.4 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ Կազմակերպության տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն) որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:
3.2 Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
3.3 Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա) ավագանու համաձայնությամբ Կազմակերպության հիմնադրումը.
բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
գ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.
դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
ե) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.
զ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.
է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
3.4 Հիմնադիրը իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
3.5 Հիմնադիրը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Կազմակերպության կառավարման մարմնի ձևավորումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
բ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության գործունեության նկատմամբ.
գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության Տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.
դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.
ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
զ) հաստատում է Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը.
է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.
ը) իրականացնում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
3.6 Կազմակերպության տնօրենն (այսուհետ՝ Տնօրեն) իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է Կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
3.7 Տնօրենը՝
ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.
բ) սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.
գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.
դ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր.
ե) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
է) կատարում է աշխատանքի բաշխում Կազմակերպության աշխատողների միջև.
ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
ժ) ապահովում է աշխատանքային կարգապահության ներքին կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
ժա) կազմում է Կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում Հիմնադրի հաստատմանը.
ժբ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ.
3.8 Աշխատողները՝
ա/ ապահովում և իրականացնում են սույն կանոնադրությամբ հաստատված խնդիրների կատարումը՝ իրենց լիազորությունների շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով.
բ/պատասխանատու են իրենց հանձնարարված աշխատանքների կատարման որակի և արդյունքի համար:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումների և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան, իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
4.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով Կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:
4.4 Կազմակերպության սեփականության պահպանման պարտավորությունը կրում է Կազմակերպությունը:
4.5 Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:
4.6 Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:
4.7 Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Հիմնադրի համաձայնությամբ հանձնելու վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպության ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են:

Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

4.8 Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

4.9 Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի բյուջեով նախատեսված միջոցների հաշվին, սեփական արտադրանքի վաճառքից ստացած գումարների հաշվին և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

4.10 Կազմակերպության ֆինանսական լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) Հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները

գ) ՀՀ օրենսդրությամբ չարգելված և Կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները

դ) Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի՝ Հիմնադրի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

4.11 Կազմակերպության շահույթը նպատակաուղղված է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը՝ ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացում, աշխատողների սոցիալական խնդիրների լուծմանը:

4.12 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող /ոչ առևտրային/ կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

## 5.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

5.1 Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

5.2 Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի բյուջե:

***Աշխատակազմի քարտուղար*** ***Ելլի Շահնազարյան***

*Հավելված N 2*
*Կապան համայնքի ավագանու*
*2019 թ մարտի 29-ի թիվ 47-Ն որոշման*

*հավելված N 13*
*Կապան համայնքի ավագանու*
*2018թ. դեկտեմբերի 10-ի թիվ 117-Ն որոշման*

*Կապան համայնքի <<Դավիթ Բեկի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային*

1 *Խմբերի թիվը՝ 1*

2 *Հաստիքացուցակը և պաշտոնային*

| *Հ/Հ* | *Պաշտոնի անվանումը* | *Միավորը* | *Դրույքաչափը* | *Աշխատավարձի ֆոնդ* |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 100000 | 100000 |
| 2 | Դաստիարակ | 1.12 | | **93632** |
| 2.1 | 1-ին կարգ | | 92400 | 0 |
| 2.2 | 2-րդ կարգ | | 88000 | 0 |
| 2.3 | 3-րդ կարգ | 1.12 | 83600 | 93632 |
| 3 | Դաստիարակի օգնական | 1 | 71429 | 71429 |
| 4 | Խոհարար | 1 | 71429 | 71429 |
| ***Ընդամենը*** | | ***4.12*** | | ***336490*** |

*Աշխատակազմի քարտուղար* *Նելլի Շահնազարյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 12-Ա**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 6-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42)-րդ կետով, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631-Ն որոշման հավելվածի 11-րդ կետի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ կազմը՝

1) Գևորգ Փարսյան - Կապան համայնքի ղեկավար, հանձնաժողովի նախագահ

2) Մայա Միրզոյան – «Կապան քաղաքի մանկական կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի քարտուղար

3) Նելլի Շահնազարյան - Կապանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի անդամ

4) Աննա Գաբրիելյան – Կապանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ

5) Աննա Ոսկանյան – Սյունիքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ

6) Ռուզաննա Գալստյան - սոցիալական ծառայության տարածքային գործակալության մասնագետ, հանձնաժողովի անդամ

7) Մելանյա Սահակյան - «Կապան քաղաքի մանկական կենտրոն» ՀՈԱԿ-ի սոցիալական աշխատող, հանձնաժողովի անդամ

8) Սաթինե Հարությունյան – Կապանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ

9) Անուշ Մեժլումյան – «Վորլդ Վիժն Հայաստան» զարգացման միջազգային կազմակերպության անդամ, հանձնաժողովի անդամ

2. Ուժը կորցրած ճանաչել Կապան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի «Կապանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու և համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 100-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 6-Ա որոշումը:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 13-Ա**

**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34)-րդ կետով և 84-րդ հոդվածի 1)-ին կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

Կապան համայնքի բյուջեի և հնգամյա ծրագրի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար ստեղծել համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին հետևյալ կազմով՝

Դավիթ Հայրապետյան – Կապան համայնքի ղեկավարի տեղակալ

Նելլի Շահնազարյան – Կապանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Միհր Ավետիսյան – համայնքի ղեկավարի օգնական

Իվետա Թադևոսյան- Կապանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ

Արմեն Ստեփանյան – Կապանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի պետ

Հասմիկ Ղոնյան – Կապանի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի պետ

Վրույր Հարությունյան – համայնքի բնակիչ

Նարեկ Դավթյան – համայնքի բնակիչ

Շանթ Դավթյան – համայնքի բնակիչ

Մանաս Կարապետյան - Կապան համայնքի ավագանու անդամ

Հայկ Հարությունյան – Կապան համայնքի ավագանու անդամ

Իվան Կոստանդյան – Կապան համայնքի ավագանու անդամ

**Կողմ( 11 )՝**

**ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ**

**ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ**

**ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ**

**ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ**

**ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ**

**ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ**

**ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ**

**ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ**

**ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ**

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԷԴՎԻՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 14-Ա**

**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 117-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՄԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Կապան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 10-ի «Կապան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 117–Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 1-ին կետի 13)-րդ, 14)-րդ, 15)-րդ և 16)-րդ 24)-րդ կետերով հաստատված N 13, 14, 15, 16 և 24 հավելվածները հաստատել նոր խմբագրությամբ համաձայն N1, N2, N3, N4 և N5 հավելվածների:

2) Որոշման 27)-րդ կետով հաստատված N 27 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1 Հավելվածի 47-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

| | | | |
|---|---|---|---|
| «Օժանդակ բանվոր | 14 | 130000 | 1820000» |

1.2 Ավելացնել նոր 51-րդ տող հետևյալ բովանդակությամբ՝

| | | | |
|---|---|---|---|
| «Օժանդակ բանվոր /Սյունիք բնակավայր/ | 1 | 120000 | 120000» |

1.3 Հավելվածի «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

| | | |
|---|---|---|
| «Ընդամենը | 157.5 | 18385568» |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

*Հավելված N 1*
*Կապան համայնքի ավագանու*
*2019 թ մարտի 29-ի թիվ 14-Ա որոշման*

*հավելված N 13*
*Կապան համայնքի ավագանու*
*2018թ. դեկտեմբերի 10-ի թիվ 117-Ա որոշման*

*Կապան համայնքի <<Արծվանիկի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային*

1 *խմբերի թիվը՝ 1*

2 *Հաստիքացուցակը և պաշտոնային*

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Միավորը | Դրույքաչափը | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 100000 | 100000 |
| 2 | Դաստիարակ | 1.12 | | **98560** |
| 2.1 | 1-ին կարգ | | 92400 | 0 |
| 2.2 | 2-րդ կարգ | 1.12 | 88000 | 98560 |
| 2 3 | 3-րդ կարգ | | 83600 | 0 |
| 3 | Դաստիարակի օգնական | 1 | 71429 | 71429 |
| 4 | Խոհարար | 1 | 71429 | 71429 |
| 5 | Հավաքարար | 1 | 73826 | 73826 |
| | *Ընդամենը* | *5.12* | | *415244* |

*Աշխատակազմի քարտուղար* *Նելլի Շահնազարյան*

*Հավելված N 2*
*Կապան համայնքի ավագանու*
*2019 թ մարտի 29-ի թիվ 14-Ա որոշման*

*հավելված N 14*
*Կապան համայնքի ավագանու*
*2018թ. դեկտեմբերի 10-ի թիվ 117-Ա որոշման*

*Կապան համայնքի <<Դավիթ Բեկի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային*

1 *Խմբերի թիվը՝ 1*

2 *Հաստիքացուցակը և պաշտոնային*

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Միավորը | Դրույքաչափը | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 72800 | 72800 |
| 2 | Դաստիարակ | 1.12 | | **93632** |
| 2.1 | 1-ին կարգ | | 92400 | 0 |
| 2.2 | 2-րդ կարգ | | 88000 | 0 |
| 2.3 | 3-րդ կարգ | 1.12 | 83600 | 93632 |
| 3 | Դաստիարակի օգնական | 1 | 71429 | 71429 |
| 4 | Խոհարար | 1 | 71429 | 71429 |
| ***Ընդամենը*** | | ***4.12*** | | ***309290*** |

*Աշխատակազմի քարտուղար* *Նելլի Շահնազարյան*

*Հավելված N 3*
*Կապան համայնքի ավագանու*
*2019 թ մարտի 29-ի թիվ 31 որոշման*

*հավելված N 15*
*Կապան համայնքի ավագանու*
*2018թ. դեկտեմբերի 10-ի թիվ 117-Ն որոշման*

***Կապան համայնքի <<Ծավի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ***

1 ***Խմբերի թիվը՝ 1***

2 ***Հաստիքացուցակը և պաշտոնային***

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Միավորը | Դրույքաչափը | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 100000 | 100000 |
| 2 | Դաստիարակ | 1.12 | | **93632** |
| 2.1 | 1-ին կարգ | | 92400 | 0 |
| 2.2 | 2-րդ կարգ | | 88000 | 0 |
| 2.3 | 3-րդ կարգ | 1.12 | 83600 | 93632 |
| 3 | Դաստիարակի օգնական | 1 | 73826 | 73826 |
| 4 | Խոհարար | 1 | 73826 | 73826 |
| ***Ընդամենը*** | | ***4.12*** | | ***341284*** |

***Աշխատակազմի քարտուղար*** ***Նելլի Շահնազարյան***

*Հավելված N 4*
*Կապան համայնքի ավագանու*
*2019 թ մարտի 29-ի թիվ 14-Ա որոշման*

*հավելված N 16*
*Կապան համայնքի ավագանու*
*2018թ. դեկտեմբերի 10-ի թիվ 117-Ա որոշման*

*Կապան համայնքի <<Սյունիքի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային*

1 *խմբերի թիվը՝ 2*

2 *Հաստիքացուցակը և պաշտոնային*

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Միավորը | Դրույքաչափը | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 100000 | 100000 |
| 2 | Դաստիարակ | 2.24 | | **202048** |
| 2 1 | 1-ին կարգ | 1.12 | 92400 | 103488 |
| 2 2 | 2-րդ կարգ | 1.12 | 88000 | 98560 |
| 2.3 | 3-րդ կարգ | | 83600 | 0 |
| 4 | Դաստիարակի օգնական | 2 | | **145255** |
| 4.1 | Դաստիարակի օգնական | 1 | 73826 | 73826 |
| 4 2 | Դաստիարակի օգնական | 1 | 71429 | 71429 |
| 5 | Երաժշտության դաստիարակ | 0 5 | | **40700** |
| 5.1 | 1-ին կարգ | 0.5 | 81400 | 40700 |
| 5.2 | 2-րդ կարգ | | 77000 | 0 |
| 6 | Խոհարար | 1 | 71429 | 71429 |
| 7 | Տնտեսվար | 0.5 | 71429 | 35714.5 |
| 8 | Հավաքարար | 0.5 | 73826 | 36913 |
| 9 | Պահակ | 1 | 73826 | 73826 |
| 10 | Բուժքույր | 0.5 | 73826 | 36913 |
| | *Ընդամենը* | *9.24* | | *742798.5* |

*Աշխատակազմի քարտուղար* *Նելլի Շահնազարյան*

*հավելված N 5*
*Կապան համայնքի ավագանու*
*2019 թվականի մարտի 29-ի թիվ 14-Ա որոշման*

*հավելված N 24*
*Կապան համայնքի ավագանու*
*2019 թվականի դեկտեմբերի 10 -ի թիվ 117-Ա*
*որոշման*

***<< Մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը***

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Միավորը | Դրույքաչափը | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| *I* | *Վարչատնտեսական անձնակազմ՝* | | | |
| 1 | Տնօրեն | 1 | 104500 | 104500 |
| 2 | Գործավար | 1 | 73826 | 73826 |
| 3 | Հրահանգիչ | 1 | 71429 | 71429 |
| 4 | Բուժքույր | 1 | 71429 | 71429 |
| 5 | Երաժիշտ | 1 | 71429 | 71429 |
| 6 | Տնտեսվար | 1 | 71429 | 71429 |
| 7 | Հանդերձապան-դռնապահ | 1 | 71429 | 71429 |
| 8 | Հավաքարար | 1 | 71429 | 71429 |
| 9 | Պահակ՝ | 2 | | 145255 |
| 9.1 | Պահակ | 1 | 71429 | 71429 |
| 9.2 | Պահակ | 1 | 73826 | 73826 |
| | *Ընդամենը* | *10.0* | | *752155* |
| *II* | *Մասնագիտական /մանկավարժական/ անձնակազմ՝* | | | |
| 10 | Ավագ մարզիչ | 2 | 80000 | 160000 |
| 11 | Մարզիչ-մանկավարժ, դրույք | 5 | 73346 | 366730 |
| 11.1 | 1-ին կարգ | | 74800 | 0 |
| 11 2 | 2-րդ կարգ | | 73810 | 0 |
| 11.3 | 3-րդ կարգ | | 71429 | 0 |
| 12 | Մարզիչ-մանկավարժ, դրույք | 5 | 73826 | 369130 |
| | *Ընդամենը* | *12* | | *895860* |
| | *Ընդհանուրը* | *22.0* | | *1648015.0* |

*Աշխատակազմի քարտուղար* Ն. Շահնազարյան *Նելլի Շահնազարյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 15-Ն**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԹԻՎ 71-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 36-րդ կետով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 37-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Կապան համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 23-ի «Կապան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի եվ դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին» թիվ 71-Ն որոշումը:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԱՌԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարի
2019 թվականի մարտի 29-ի թիվ 15-Ն որոշման

# ԿԱՐԳ
# ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի (այսուհետ՝ Համայնք) վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկազում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Կապան համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև Համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են **անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով**:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Համայնքի ղեկավարի (կամ նրա կողմից լիազորված կազմակերպության) կողմից Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջը և /կամ/ տիրապետողին տրվում է իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը և պայմանները սահմանող փաստաթուղթը՝ կցելով բարեկարգման տարածքի ուրվագիծը:

5. Համայնքի վարչական տարածքի բարեկարգման և սանիտարական մաքրման համայնքային սխեման կազմում և հաստատում է համայնքի ղեկավարը:

6. Սույն կարգը տարածվում է Համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի (այսուհետ՝ օբյեկտներ) և տիրապետողների վրա:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.

4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների կանաչապատում.

5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում.

8. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

9. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի՝ Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին՝ N 91 որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

10. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ,

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

11. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Կապանի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից:

12. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են համայնքապետարանի կողմից տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

13. Համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

14. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով

2) խանութների և հասարակական սննդի օբյեկտների մուտքի մոտ փողոցի կողմից պետք է տեղադրված լինեն կենցաղային փոքր աղբարկղեր

3) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, ճամփեզրին կամ երթևեկությանը չխանգարող այլ տարածքներում.

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

15. Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

16. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն համայնքապետարանի աշխատակազմին ներկայացված նախագծի հաստատումից հետո:

17. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական տեսքի ցանկացած փոփոխություն, այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը, համաձայնեցնում է համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման հետ:

18. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

19. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

20. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

21. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների համար՝ հատկացված և/կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 1-50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 1-10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված տարածքի պարագծից 1-50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

Աշխատակազմի քարտուղար Ն. Շահնազարյան Նելլի Շահնազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 16-Ն**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԹԻՎ 72-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 37-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, համայնքի ավագանին *որոշում է.*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Կապան համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները եվ դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 72-Ն որոշումը:

**Կողմ( 11 )՝**

| | |
|---|---|
| ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ | ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ |
| ԱՄԲՅԱՆ ՎԱՉԵ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ | |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու
2019 թվականի մարտի 29-ի թիվ 16-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1.Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի (այսուհետև՝ համայնքի) կամավոր խնդիրների, դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և այդ լիազորությունների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքի կամավոր խնդիրներն են՝

1) համայնքի սոցիալապես անապահով բնակչության սոցիալական օգնության տրամադրման կազմակերպումը

2) զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման աջակցումը

3) համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության աջակցումը

4) համայնքի արխիվային գործի վարումը

5) համայնքային ենթակայության կազմակերպությունների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով միջոցառումների իրականացումը

6) աջակցություն քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.

7) բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարության և կապիտալ նորոգման իրականացումը

8) համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարության և նորոգման կազմակերպումը

9) սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության և նորոգման կազմակերպումը

10) հանգստի հանրային վայրերի խնամքի և պահպանության կազմակերպումը

11) համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բարելավման աշխատանքների իրականացումը

12) աջակցություն համայնքում արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.

13) աջակցություն համայնքում երիտասարդության դերի բարձրացմանը.

14) աջակցություն համայնքում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը

15) աջակցություն համայնքում զբոսաշրջության զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացմանը.

3. Սույն կարգում թվարկված կամավոր խնդիրները սպառիչ չեն:

4. Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են հետևյալ սեփական լիազորությունները՝

1) միջոցներ են ձեռնարկում համայնքի սոցիալապես անապահով բնակչության սոցիալական օգնության տրամադրման ուղղությամբ

2) միջոցներ են ձեռնարկում զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ

3) աջակցում են համայնքի հանրակրթական դպրոցների գործունեությանը

4) իրականացնում են համայնքի արխիվային գործի վարումը

5) միջոցներ են ձեռնարկում համայնքային ենթակայության կազմակերպությունների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով

6) աջակցում են քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.

7) իրականացնում են բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարության և կապիտալ նորոգման աշխատանքներ

8) իրականացնում են համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարության և նորոգման աշխատանքներ

9) իրականացնում են սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության և նորոգման աշխատանքներ

10) կազմակերպում են հանգստի հանրային վայրերի խնամքը և պահպանությունը

11) իրականացնում են համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բարելավման աշխատանքներ

12) աջակցում են համայնքում արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.

13) աջակցում են համայնքում երիտասարդության դերի բարձրացմանը.

14) աջակցում են համայնքում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը

15) աջակցում են համայնքում զբոսաշրջության զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացմանը.

5. Համայնքի՝ համայնքի բյուջեից ֆինանսավորում պահանջող կամավոր խնդիրների իրականացման նպատակով, մինչև համայնքի տվյալ տարվա բյուջեի հաստատումը, համայնքի ղեկավարը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում տվյալ տարում իրականացվելիք կամավոր խնդիրների ցանկը և դրանց կատարման համար անհրաժեշտ ծախսերը:

6. Համայնքի ավագանին, ելնելով համայնքի բյուջեի հնարավորություններից, որոշում է տվյալ տարում կամավոր խնդիրների համար հատկացվող ընդհանուր գումարի և յուրաքանչյուր կամավոր լիազորության իրականացման համար անհրաժեշտ հատկացման չափը, ընդ որում յուրաքանչյուր տարվա համար հատկացվող ընդհանուր ֆինանսական միջոցները չեն կարող գերազանցել համայնքի այդ տարվա բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 5%-ը:

7. Ընթացիկ տարում կամավոր խնդիրների լուծման նպատակով հատկացված ընդհանուր գումարի սահմաններում մի կամավոր խնդրի լուծման համար հատկացված գումարը համայնքի ավագանու որոշմամբ կարող է ուղղվել մեկ կամ մի քանի այլ կամավոր խնդիրների իրականացմանը՝ ելնելով տարվա ընթացքում իրադրության փոփոխություններից:

8. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական և գույքային միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

9. Հրատապ լուծում պահանջող դեպքերում համայնքի ղեկավարը իրավունք ունի համայնքի սեփական լիազորության իրականացման համար ֆինանսական միջոցներ հատկացնել ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, այդ մասին հաղորդում տալով առաջիկա ավագանու նիստում:

10. Կամավոր խնդիրների և դրանց լուծման իրականացման հետ կապված առաջարկություններ կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

11. Նախաձեռնողը համայնքի ղեկավարի քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը և ներկայացնելով անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

12. Համայնքի ղեկավարը առաջարկությունը և կից ներկայացված փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) առաջարկությանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ գումարի չափը և առաջարկությունը նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերի և ավագանու որոշման համապատասխան նախագծի հետ ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը՝ արդյունքների մասին տեղեկացնելով նախաձեռնողին: Անհրաժեշտության դեպքում ավագանու նիստին կարող է հրավիրվել նախաձեռնողը:

2) առաջարկությանը չհամաձայնելու դեպքում համայնքի ղեկավարը նախաձեռնողին գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով դրա պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13. Համայնքի ավագանին սույն կարգի համաձայն ներկայացված կամավոր խնդրի լուծման հարցը քննարկում է ավագանու նիստում և ընդունում է համապատասխան որոշում՝ կամավոր խնդրի լուծման իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

14. Համայնքի կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ավագանին կարող է ստեղծել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

15. Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների՝ սույն կարգով չկարգավորված հարցերը կարող են կարգավորվել միայն համայնքի ավագանու առանձին որոշումներով:

*Աշխատակազմի քարտուղար* *Նելլի Շահնազարյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 17-Ն**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, համայնքի ավագանին *որոշում է.*

Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԱՎԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

Հաստատված
ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքի ավագանու
2019 թվականի մարտի 29-ի թիվ 17-Ն որոշման

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան գործունեության թույլտվություն:

2. Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա ճաշացուցակ, որտեղ նշվում է կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակը, որը հանրային սննդի օբյեկտի կողմից առաջարկվում է սպառողին՝ մասնաբաժնի և գնի նշումով:

3. Հանրային սննդի կազմակերպման սրահը պետք է հատուկ կահավորված լինի նախատեսված պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար:

4. Մուտքի մոտ պետք է փակցված լինի ցուցանակ, որտեղ նշվում են կազմակերպության անվանումը, տիպը, կազակերպական-իրավական տեսակը, իրավաբանական հասցեն և աշխատանքային ռեժիմը:

5. Սպասարկող անձնակազմի անդամները, որոնք անմիջապես առնչվում են սննդի հետ, պետք է ունենան անձնական սանիտարական գրքույկ:

6. Խոհարարն ու հրուշակագործը պետք է ունենան մասնագիտական կրթություն կամ մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթ:

7. Սպասարկող անձնակազմի անդամները պետք է ունենան աշխատանքային արտահագուստ, ինչպես նաև կազմակերպության ղեկավարի կողմից տրված անվանաքարտ՝ լուսանկարով, անվան, ազգանվան և զբաղեցրած պաշտոնի նշմամբ՝ վավերացված կազմակերպության կնիքով:

8. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապհովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով, այդ թվում օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներով և չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներով, ինչպես նաև տվյալ հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

9. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:

10.Ուսումնական հաստատություններում մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

11. ժամը 24-00-ից հետո աշխատող զվարճանքի օբյեկտներում արգելվում է ակնհայտ 16 տարին չլրացած անձանց մուտքը:

12. Ժամը 24-$^{00}$-ից հետո աշխատող բոլոր հանրային սննդի օբյեկտների սրահի պատերը և պատուհանները պետք է ձայնամեկուսացված լինեն, որպեսզի ներսի աղմուկը չհարուցի շրջակա տարածքում բնակվող բնակիչների դժգոհությունը, ինչպես նաև կազմակերպության

ղեկավարի կողմից պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ ժամը 23:00-7:00-ն օբյեկտի գործունեության հետ կապված նաև օբյեկտից դուրս լռության պահպանման ուղղությամբ:

13. Հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ:

14. Թույլտվություն տալու մասին հայտի քննարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:

15. Թույլտվություն տալու հետ միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:

16. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը, որը տրվում է հայտատուի կողմից վճարված տեղական տուրքին համապատասխանող ժամկետով՝ վճարման օրվանից (եթե հայտատուի կողմից այլ ժամկետ չի նշվում):

17. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված: Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտի մերժման վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

*Աշխատակազմի քարտուղար* *Եղլի Շահնազարյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 18-Ն**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԹԻՎ 73-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 37-րդ հոդվածներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի կողմից սոցիալական աջակցության տրամադրման կարգը և չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Կապան համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի կողմից սոցիալական աջակցության տրամադրման կարգը եվ չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 73-Ն որոշումը:

1. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

Հաստատված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու
2019 թվականի մարտի 29-ի թիվ 18-Ն որոշմամբ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի կողմից սոցիալական աջակցություն տրամադրվում է համայնքի բնակիչների դիմումների հիման վրա համայնքի ղեկավարի որոշմամբ: Սոցիալական աջակցության տրամադրման անհրաժեշտ նախապայմաններն են

1) համայնքի բնակիչ հանդիսանալը

2) սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտք չունենալը

3) համայնքապետարանում գործող՝ համայնքում սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ դրական եզրակացությունը

2. Համայնքի բնակիչների սոցիալական խնդիրների վերհանման, համայնքի ղեկավարին ուղղված սոցիալական բնույթի դիմումների քննարկման, դիմումներում ներկայացված խնդիրների և դիումատուների կյանքի պայմանների ուսումնասիրության նպատակով ստեղծված Հանձնաժողովը ուսումնասիրում է ներկայացված դիմումը և տալիս համապատասխան եզրակացություն:

3. Հրատապ լուծում պահանջող առանձին դեպքերում համայնքի ղեկավարը կարող է կայացնել սոցիալական օգնության հատկացման որոշումներ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

4. Սոցիալական աջակցությունը ըստ հնարավորության կարող է տրամադրվել դրամական օգնությամբ կամ բնամթերային տեսքով:

5. Սոցիալական աջակցության տրամադրման որոշումներ կայացնելիս գործում են հետևյալ չափորոշիչները՝

1) զոհված ազատամարտիկների ընտանիքներ

2) վիրավոր, հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներ

3) բազմազավակ ընտանիքներ /3 և ավելի անչափահաս երեխա ունեցող/

4) միայնակ ծերեր

5) միայնակ հաշմանդամներ

6) միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաներ ունեցող անապահով ընտանիքներ

7) նպաստառու ընտանիքներ

8) գործազուրկի կարգավիճակ ունեցող անապահով անձինք

9) միայնակ մայրեր

10) ամուսնալուծված՝ անչափահաս երեխաներ ունեցող անապահով ընտանիքներ

11) հաշմանդամ ծնողներ կամ երեխաներ ունեցող անապահով ընտանիքներ

12) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք

13) առողջական խնդիրներ ունեցող /վիրահատության կամ թանկարժեք բուժման ենթակա/ անապահով անձինք

14) ընտանիքի անդամի հուղարկավորության կազմակերպման համար դրամական օգնության, դագաղի և/կամ տրանսպորտի տրամադրման խնդրանքով դիմած անապահով անձինք

6. Սոցիալապես անապահով ընտանիքներին կամ անձանց հատկացվող մեկ անգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 50 հազար դրամ: Նույն ընտանիքին կամ անձին օրացուցային տարվա ընթացքում սոցիալական օգնություն կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ, որոնց ընդհանուր չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5 պատիկի չափը:

7. Առանձին բացառիկ դեպքերում Հանձնաժողովի առաջարկության հիման վրա համայնքի ղեկավարը կարող է կայացնել սոցիալական օգնության՝ սույն կարգով չնախատեսված եղանակով և չափով տրամադրման որոշումներ, այդ մասին հաղորդում տալով առաջիկա ավագանու նիստում:

**Աշխատակազմի քարտուղար** **Նելլի Շահնազարյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 19-Ն**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու
2019 թվականի մարտի 29-ի թիվ 194-Ն որոշման

# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ 1.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին (այսուհետ՝ քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահ) ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները:

2. Քաղաքացիական հոգեհանգստի ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվությունը տալիս է Կապանի համայնքի ղեկավարը՝ ընթացիկ տարվա տեղական տուրքի վճարման անդորրագրի հիման վրա, եթե քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը թույլտվության տրամադրման պահին (ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ անգամ) համապատասխանում է սույն հավելվածով սահմանված սահմանափակումներին, պահանջներին և պայմաններին:

3. Առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացումը և (կամ) մատուցումը առաջացնում է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

## ԳԼՈՒԽ 2.

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՐԱՀՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող են գտնվել՝

1) ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, հյուրանոցներից, բազմաբնակարան շենքերից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից, հանրային սննդի օբյեկտներից նվազագույնը 100մ, իսկ անհատական բնակելի տներից նվազագույնը 70մ հեռավորության վրա բացառությամբ, եթե դրանք գտնվելու են՝

ա) հիվանդանոցներում գործող ախտաբանաանատոմիական բաժիններում կամ բաժանմունքներում, կամ

բ) գերեզմանատներին կից՝ գերեզմանատների զբաղեցված հողամասի սահմանից մինչև 50մ հեռավորության վրա, կամ

գ) միայն անհատական բնակելի տներից և (կամ) հանրային սննդի օբյեկտներից մինչև սույն կետի առաջին ենթակետում նշված հեռավորությունների վրա և առկա է դրանց սեփականատերերի գրավոր համաձայնությունը:

5. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին և պայմաններին՝

1) Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է ունենան՝

ա. նախասրահ՝ հանդերձարանով,

բ. հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ,

գ. շուրջօրյա աշխատանքային ռեժիմով դիակների պահման համար առանձնացված վայր (տարածք),

դ. սանհանգույց (որը պետք մատչելի լինի նաև տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար),

ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված առաջին բժշկական օգնության համար անհրաժեշտ դեղորայքով և կահավորմամբ սենյակ,

զ. հուղարկավորությունը ստանձնողների ընդունման համար նախատեսված առանձին մուտքով գրասենյակային տարածք,

2) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է մատչելի լինի տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար՝ առնվազն մինչև հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ, զուգարան և առաջին բժշկական օգնության սենյակ մուտք գործելու համար,

3) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահում հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված երկու և ավելի սենյակի առկայության դեպքում յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին մուտք, նախասրահ, սանհանգույցներ,

4) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահով զբաղեցված և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքը՝ ներառյալ սույն կետի 6-րդ ենթակետով նախատեսված տարածքը պետք է ունենա առնվազն երկու մետր բարձրությամբ անթափանց նյութերով կառուցված ցանկապատ կամ պարիսպ:

Ընդ որում քաղաքացիական հոգեհանգստի իրականացման ծառայությունները իրականացվում և (կամ) մատուցվում են միայն սրահի ցանկապատված տարածքում այնպես, որ սրահի տարածքից դուրս գտնվող անձանց համար սգո պարագաները, այդ թվում՝ ծաղիկները և ծաղկեպսակները տեսանելի չլինեն՝ բացառությամբ ավտոկայանատեղիի,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան և հասցեի նշմամբ ցուցանակներ, ընդ որում ցուցանակները պետք է լինեն լուսավորված,

6) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահի տարածքը պետք է ունենա յուրաքանչյուր հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 20 ավտոմեքենայի համար նախատեսված կայանատեղ,

7) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահին կից պետք է լինի հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 100 քմ մակերեսով տարածք՝ քաղաքացիական հոգեհանգստի արարողությանը մասնակցող անձանց գտնվելու համար՝ ապահովված աղբամաններով, լուսավորությամբ և ծխելու համար նախատեսված (առանձնացված) հատվածով,

8) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է ունենա ջեռուցման, հովացման, օդափոխության, իսկ հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակում նաև երաժշտության ձայնային համակարգեր,

9) քաղաքացիական հոգեհանգստի սրահը շահագործողը պարտավոր է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ժամանակահատվածում անհրաժեշտության դեպքում առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով, ապահովել բժշկի ներկայությունը:

10) քաղաքացիական հոգեհանգստի սրահի շահագործողը քաղաքացիական հոգեհանգստի սրահում ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ընթացքում պետք է ապահովի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված քաղաքաշինական, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ (սանիտարահամաճարա- կաբանական) նորմերի ու կանոնների պահպանումը:

6. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը կարող է ունենալ նաև հոգևորականի համար նախատեսված սենյակ, ինչպես նաև առանձին մուտքով ծաղիկների և սգո պարագաների վաճառքի սրահ, որի ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված կամ մգավորված ապակիներով այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն:

**Աշխատակազմի քարտուղար** **Սելլի Շահնազարյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 20-Ն**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 131-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով, «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, համայնքի ավագանին *որոշում է.*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Կապան համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 12-ի «Կապան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ համաքաղաքային կանոնները և չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 131-Ն որոշումը:

**Կողմ( 11 )՝**

| | |
|---|---|
| ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ | ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ |
| ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՖԵՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ | |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՎԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

Հաստատված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու
2019 թվականի մարտի 29-ի թիվ 20-Ն որոշման

# ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում են Կապան համայնքում արտաքին գովազդի տեղաբաշխման կարգն ու պայմանները, ծավալը, քանակությունը, արտաքին գովազդի տեղադրման այլ չափորոշիչները, տեղադրման թույլտվության տրամադրման կարգը, գովազդի համար սահմանված տեղական տուրքերի վճարման կարգը և պայմանները:

2. Համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրումն իրականացվում է «Գովազդի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

3. Համայնքի տարածքում գովազդի տեղադրման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը: Արտաքին գովազդի տեղադրման համար իրավաբանական կամ ֆիզիկական անձը /այսուհետև՝ դիմող/ համայնքապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա/ դիմում համայնքի ղեկավարի անունով,

բ/ արտաքին գովազդի նախատեսվող էսքիզը, տեղադրման տարածքի հատակագիծը, որտեղ պետք է նշված լինի գովազդային վահանակի փաստացի տեղադրման վայրը,

գ/ գովազդատու իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցման վկայականի պատճենը/ ֆիզիկական անձի դեպքում ՝ անձնագրի պատճենը,

դ/ բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման հատվածներում արտաքին գովազդ տեղադրելու դեպքում՝ շենքի կառավարման լիազոր մարմնի համապատասխան որոշումը,

ե/ ճանապարհների վրա արտաքին գովազդի տեղադրման դեպքում երթևեկության անվտանգության մասով գրավոր համաձայնություն ճանապարհային ոստիկանությունից՝ ներկայացված հատակագծի վրա համապատասխան նշումով,

զ/ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների արտաքին գովազդի դեպքում առողջապահության նախարարության թույլտվությունը:

4. Համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումը սույն կանոններ 3-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում իրականացնում է.

ա/ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություն,

բ/ գովազդի տեղադրման վայրի զննում,

գ/ տեղադրվող գովազդի համապատասխանությունը գործող պահանջներին,

դ/ եզրակացության կազմում:

5. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրման մասին դիմումի բավարարումը կամ մերժումը ձևակերպվում է համանքի ղեկավարի համապատասխան որոշմամբ,

6. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրման դեպքում դիմումատուին տրամադրվում է գովազդի էսքիզի համաձայնեցված տարբերակը՝ ստորագրված և կնքված համայնքի ղեկավարի կողմից, անհրաժեշտության դեպքում նաև տեխնիկական պայմաններ, որտեղ նշվում են արտաքին գովազդի տեղադրման աշխատանքները իրականացնելու ժամկետները:

7. Արտաքին գովազդի տեղադրման դիմումը կարող է մերժվել, եթե՝

ա/ ներկայացված փաստաթղթերը թերի են և դրա մասին համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից պատշաճ ձևով նախազգուշացվելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում դիմողը չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը կամ նյութերը,

բ/ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «Գովազդի մասին» ՀՀ օրենքի կամ սույն կարգի պահանջներին,

գ/ արտաքին գովազդը տեղադրվելու է ճանապարհի վթարավտանգ հատվածների, հենապատերի, ծառերի կամ ժայռերի վրա և այլ դեպքերում:

8. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրումը մերժելու մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառներն ու մերժման համար հիմք հանդիսացող իրավական հիմքերը:

## 1. ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9. Գովազդային վահանակի հենապունը պետք է պատրաստվի այնպիսի նյութերից, որ քամու կամ կողմնակի ազդեցության հաշվարկային բեռնվածության տակ և շահագործման ընթացքում ապահովվի բավարար կայունություն:

10. Ճանապարհի բաժանարար գոտում գովազդային վահանակի տեղաբաշխման ժամանակ.

ա/ եթե գովազդային վահանակի լայնությունը գերազանցում է բաժանարար գոտու լայնությանը, ապա գովազդային վահանակի ներքևի եզրը պետք է գտնվի ճանապարհի մակերևույթից 6 և ավելի մետր բարձրության վրա,

բ/ եթե գովազդային վահանակի լայնությունը չի գերազանցում բաժանարար գոտու լայնությանը, ապա գովազդային վահանակի ներքևի եզրը պետք է գտնվի ճանապարհի մակերևույթից 2.5 և ավելի մետր բարձրության վրա:

11. Գովազդի լուսավորությունը՝

ա/ լուսավորության համար թույլատրվում է օգտագործել հակահրդեհային անվտանգության պահանջները բավարարող էլեկտրական լուսավորման սարքեր,

բ/ լուսավորման սարքերի ամրացումը պետք է ապահովի դրանց հուսալի միացումը գովազդային կառուցվածքի հետ այնպես, որ դիմանան ձյան և քամու ազդեցության հնարավոր բեռնվածություններին, տատանվող և հարվածային ազդեցություններին,

գ/ երթևեկության մասնակիցներին չկուրացնի լույսով, այդ թվում և անդրադարձով,

դ/ շարժվող տարրեր պարունակող գովազդային պատկերների օգտագործումը գովազդային վահանակի վրա պետք է իրականացվի այնպես, որ գովազդային տեղեկությունը միաժամանակ ամբողջությամբ հայտնվի գովազդային վահանակի վրա,

ե/ լուսավորությունը պետք է իրականացվի փողոցային արտաքին լուսավորության հետ միասին:

12. Ճանապարհին տեղադրված գովազդը պետք է ապահովի՝

ա/ ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների տեսանելիությունը և երթևեկության մասնակիցների կողմից դրանց ընկալումը,

բ/ ինժեներական կառույցների ճակատային մասի վրա տեղադրելու դեպքում չփոքրացնի կառույցի տեսանելի չափերը,

գ/ հետիոտների կողմից այն ընկալելը առանց ճանապարհի երթևեկելի մաս դուրս գալու:

13. Գովազդակիր կազմակերպությունը պարտավոր է ապահովել գովազդային վահանակի պատշաճ վիճակը /ժամանակին ներկել, փոխել պատռված պաստառները և այրված լամպերը/:

14. Գովազդակիր կազմակերպությունն իր ցանկությամբ իրավունք ունի փոխելու գովազդային վահանակի պաստառը, դրա մասին 7 օր առաջ տեղյակ պահելով համայնքի ղեկավարին:

## 3. ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՎԱՐՏԻ ՓԱՍՏԱԳՐՈՒՄԸ

15. Դիմողը տեխնիկական պայմանների հիման վրա կատարում է գովազդի տեղադրման աշխատանքները՝ ներկայացված նախագծերին համապատասխան և տեղեկացնում համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանմանը աշխատանքների ավարտի մասին, որից հետո ստորաբաժանման աշխատակիցն իրականացնում է կատարված աշխատանքների ուսումնասիրություն:

16. Կատարված աշխատանքները սույն կարգի պահանջներին և ներկայացված նախագծերին համապատասխանության դեպքում /եթե կատարվել են նաև գովազդային վահանակի շինարարական աշխատանքներ/, համայնքապետարանի կողմից կազմվում է շինարարական աշխատանքների ավարտման ակտ:

## 4. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

17. Արտաքին գովազդի տեղադրման աշխատանքների ավարտի փաստագրումից հետո հաջորդող օրվանից սկսած իրականացվում են սահմանված տեղական տուրքերի հաշվառումը և գանձումը:

18. Դատարկ գովազդային վահանակը հետագայում գովազդով համալրելու դեպքում գովազդատուն պարտավոր է այդ մասին նախօրոք տեղեկացնել համայնքապետարան, որից հետո կատարվում է տեղական տուրքի վերահաշվարկ՝ ավագանու կողմից ընդունած տեղական տուրքերի չափերին համապատասխան:

## 5. ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼԸ

19. Արտաքին գովազդի տեղադրման թույլտվությունը ուժը կորցրած է ճանաչվում հետևյալ դեպքերում, երբ՝

ա/ գովազդատուն խախտել է «Գովազդի մասին» ՀՀ օրենքը, գովազդի վերաբերյալ այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջները,

բ/ խախտվել են թույլտվության և տեխնիկական պայմաններով սահմանված ժամկետները կամ պահանջները,

գ/ գովազդատուն ներկայացրել է գրավոր դիմում:

20. Արտաքին գովազդի տեղադրման թույլտվությունը ուժը կորցրած ճանաչելու դեպքում գովազդատուն սեփական միջոցների հաշվին պարտավոր է գովազդի տեղադրման համար հատկացված հատվածը/տարածքը/ բերել նախկին տեսքի:

**Աշխատակազմի քարտուղար** **Եղլի Շահնազարյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 21-Ա**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի ԹԻՎ 28-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30)-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17)-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «Բնակավայրերի տարածքների գոտեվորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 408 որոշումը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Կապան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Կապան համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 20-ի «Կապան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 28-Ա որոշումը:

**Կողմ( 11 )՝**

| | |
|---|---|
| ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ | ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ |
| ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ | |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*